

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՎՍԵՓ ԱԶԱՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ը.00.03- «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
Սերգեյ Սպարտակի Սուքիասյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Աղասու Թավադյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Վարդան Մերուժանի Խաչատրյան

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թ. դեկտեմբերի 11-ին, ժամը 15³⁰-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՎ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, ք. Երևան, Մ. Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. նոյեմբերի 11-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տ.գ.դ., պրոֆեսոր՝



Ս. Ա. Գևորգյան

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Համաշխարհային պրակտիկայում բանկային գործի զարգացման ժամանակակից միտումներից է խոշոր բանկային ձեռնարկատիրության տարածական զարգացումը: Չնայած վերջին քառորդ դարում ողջ աշխարհի ֆինանսական բնագավառում արագ աճին (ինչը որոշ չափով դանդաղեց 2008 թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ընթացքում), բազմաթիվ տնային տնտեսությունների և փոքր ու միջին ձեռնարկությունների համար դեռևս հասանելի չեն ֆինանսական ծառայությունները՝ հատկապես զարգացող երկրներում: Ֆինանսական ծառայությունների հասանելիության ապահովումը վերջին տարիներին հայտնվել է համաշխարհային հանրության ուշադրության կենտրոնում, ինչի վկայությունը 2010 թ. նոյեմբերին Սեուլում G 20-ի երկրների կողմից հավանության արժանացած «Սեուլյան զարգացման համաձայնագիր ընդհանուր աճի համար» փաստաթուղթն է, որը պարունակում է ֆինանսական նորաստեղծական գործիքների զարգացման դրույթներ: «G20 ֆինանսական ներառման գործողությունների պլանում», մասնավորապես, ասվում է. «Ավելի քան 2 մլրդ չափահաս մարդիկ չեն առնչվում ֆինանսական ծառայություններին և միլիոնավոր միլրո, փոքր և միջին ձեռնարկություններ (ՓՄՁ) հանդիպում են մեծ դժվարությունների՝ ֆինանսների հասանելիության առումով: Ֆինանսական ներառումը հիմնարար է՝ աղքատների կյանքի բարելավման և ՓՄՁ-ների աջակցության համար և պետք է գործի որպես տնտեսական աճի և աշխատատեղերի ստեղծման շարժիչ ուժ՝ սկսելու, աճի և բարգավաճման նպատակով»¹:

Ֆինանսական ծառայությունների հասանելիության առումով նշանակալի է առևտրային բանկի մասնաճյուղերի դերը, որոնք գործունեություն են ծավալում բազմաթիվ ենթաշուկաներում: Ծառայությունների՝ հաճախորդների համար հարմարավետ մատուցումը նրանց հնարավորություն է ընձեռում օգտվելու բացառապես ֆորմալ ֆինանսական ծառայություններից: Միաժամանակ, շահութաբերության և աճի հեռանկարի տեսանկյունից, մանրածախ բանկային ձեռնարկատիրությունը գրավիչ է. մասնաճյուղերի զարգացած ու խոշոր ցանցերն առևտրային բանկերին թույլ են տալիս լինել առավելագույնս մոտ հաճախորդին և պահպանել առաջատար դիրքեր ըստ սպառողական վարկավորման և բնակչության ավանդների ներգրավման: Տարածքային առումով մոտ լինելն առանցքային դեր է խաղում փոքր և միջին ձեռնարկությունների կողմից բանկի ընտրության համար: Հետևաբար՝ մանրածախ ուղղության զարգացումն անհնար է առանց իրացման ցանցի ընդլայնման: Որոշ չափով դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ հայաստանյան բանկերը վերջին 5 տարիներին հետևողականորեն ավելացնում են իրենց մասնաճյուղերի քանակը, նկատվում են մասնաճյուղերի ցանցերի զարգացման դրական միտումներ. 2000-2014 թթ. դրանց քանակն ավելացել է 2.7 անգամ²:

Այդուհանդերձ, ըստ առենախոսի, ՀՀ մարզերի մեծ մասում բանկային ծառայությունների հասանելիությունը և օգտագործումը ոչ բավարար մակարդակի է,

¹ G20 Financial Inclusion Action Plan. Financial Inclusion Experts Group. P.1. (տե՛ս www.gpfi.org/sites/default/files/documents/G20%20Financial%20Inclusion%20Action%20Plan.docx.pdf)

² Աղբյուր՝ Հայաստանի բանկային համակարգը (2007-ից՝ Հայաստանի ֆինանսական համակարգը) զարգացումը, վերահսկողությունը, կարգավորումը, 2004-2014 թթ.:

ինչի մասին փաստում են մի շարք ցուցանիշներ: Այսպես՝ 100 հազ. չափահաս բնակչի հաշվով, բանկային մասնաճյուղերի քանակով Հայաստանը նշանակալիորեն զիջում է զարգացած տնտեսությամբ երկրներին (2013 թ. ՀՀ-ում՝ շուրջ 20 մասնաճյուղ, համեմատության համար. ԱՄՆ-ում՝ 33, Եվրոպայում՝ 46):

Ֆինանսական ծառայությունների հասանելիությունն առնչվում է դրանց առաջարկին, այսինքն այն բանին, թե ֆինանսական համակարգը որքանով է ապահովել ամենուր և բոլորի համար այդ ծառայությունների հասանելիությունը և մատչելիությունը, մինչդեռ, նկատի ունենալով ֆինանսական ինքնամեկուսացման երևույթը, որը հանդիպում է որոշ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, հեղինակն անդրադարձել է ներառող ֆինանսական համակարգին՝ ֆինանսական ծառայությունների օգտագործման տեսակետից:

Ֆինանսական ծառայությունների հասանելիությունը և օգտագործումը նշանակալի ազդեցություն ունի տնտեսական աճի և աղքատության հաղթահարման վրա, ինչը կարևորում է դրանց առնչվող ցուցանիշների մանրագնին ուսումնասիրությունը, այդ բնագավառում առկա հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծմանն առնչվող առաջարկությունների մշակումը: Միաժամանակ՝ նոր ենթաշուկաների յուրացման, նոր մասնաճյուղերի ստեղծման և դրանց օպտիմալ տեղակայման, նոր հաճախորդների ներգրավման, բանկային ծառայությունների կատարելագործման և արդյունավետ գործունեության ապահովման, ֆինանսական ծառայությունների հասանելիության ու տնտեսական նորմատիվների միաժամանակյա պահպանման հիմնախնդիրները դեռևս բավարար ուսումնասիրված չեն, մասնաճյուղային ցանցերի զարգացման հիմքում որևէ մեթոդաբանություն չկա:

Բանկային ծեռնարկատիրության ռազմավարական պլանավորման և զարգացման հարցերը ներկայումս արտացոլվում են բազմաթիվ գիտնականների և բանկային համակարգում աշխատող մասնագետների աշխատություններում: Այդուհանդերձ, ֆինանսական ծառայությունների հասանելիության մասով, առևտրային բանկի մասնաճյուղերի ցանցերի զարգացմանն առնչվող համալիր հետազոտություններ դեռևս չեն իրականացվել: ՀՀ տնտեսության զարգացման ներկա փուլում, ֆինանսական ծառայությունների հասանելիության և օգտագործման տեսանկյունից, առևտրային բանկերի մասնաճյուղերի ցանցերի զարգացման և կառավարման տնտեսական կառուցակարգերի գործադրման հիմնախնդիրների արդիականությունը պայմանավորել է թեմայի, հետազոտության նպատակի ընտրությունը և խնդիրների առաջադրումը, աշխատանքի կառուցվածքը և հետազոտության մեթոդաբանությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է ֆինանսական ծառայությունների հասանելիության տեսանկյունից բացահայտել Հայաստանի Հանրապետությունում առևտրային բանկերի մասնաճյուղերի ցանցերի զարգացման և արդյունավետ գործունեության հիմնախնդիրները և մշակել դրանց լուծման առաջարկություններ:

Սահմանված նպատակին հասնելու համար պահանջվել է ձևակերպել և լուծել հետևյալ խնդիրները.

- բացահայտել ֆինանսական ծառայությունների հասանելիության և ֆինանսական ներառող համակարգի նշանակությունը տնտեսական աճի, տարածքային համաչափ զարգացման և աղքատության հաղթահարման գործում,

- ուսումնասիրել ՀՀ-ում առևտրային բանկերի մասնաճյուղային ցանցերի ձևավորման և զարգացման միտումները և բացահայտել դրանց նշանակությունը ֆինանսական ծառայությունների հասանելիության ապահովման գործում,
- գնահատել բանկային ծառայությունների հասանելիությունը և օգտագործումն ըստ առևտրային բանկերի մասնաճյուղերի գործունեության հիմնական ցուցանիշների,
- բացահայտել մասնաճյուղերի քանակի ավելացման և ֆինանսական միջոցների ներգրավման, ֆինանսական ծառայությունների հասանելիության ցուցանիշների և ՀՆԱ փոխկապվածությունը,
- մշակել առևտրային բանկի նոր մասնաճյուղի ստեղծման և տեղակայման մեթոդաբանական մոտեցումներ,
- մշակել առևտրային բանկի մասնաճյուղի արդյունավետ գործունեության կազմակերպման և ֆինանսական ծառայությունների հասանելիության ապահովմանն առնչվող առաջարկություններ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ բանկային համակարգն է, մասնավորապես՝ մասնաճյուղային ցանց ունեցող առևտրային բանկերը: Ուսումնասիրության առարկան առևտրային բանկերի մասնաճյուղային ցանցերի զարգացման և դրանց կողմից մատուցվող ծառայությունների հասանելիության գնահատման, առևտրային բանկի համակարգում մասնաճյուղերի մասնակցության մեթոդաբանական հիմնախնդիրներն են:

Հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության մեջ կիրառվել են վիճակագրական-մաթեմատիկական, համեմատական վերլուծության, գործոնային, համակարգային, դիտարկվող երևույթների և գործընթացների գրաֆիկական մեկնաբանման մեթոդները:

Հետազոտության տեսական հիմքը բանկային գործի տեսության բնագավառում հայրենական և արտասահմանյան գիտնականների աշխատություններն են:

Հետազոտության տեղեկատվական հիմքը Հայաստանի Հանրապետության օրենքներն են, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվային փաստաթղթերը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակումները, առևտրային բանկերի հաշվետվությունները և կայքերում առկա տեղեկատվությունը, ԱՄՀ և ՀԲ ուսումնասիրությունների արդյունքները, հետազոտության հիմնախնդիրներին նվիրված նյութերը՝ հրապարակված պարբերական մամուլում և տեղադրված համացանցում, ինչպես նաև հեղինակի սեփական ուսումնասիրությունները և հաշվարկները:

Ատենախոսության գիտական նորույթը: Հետազոտությամբ ստացված արդյունքներից որպես գիտական նորույթ կարող է բնութագրվել հետևյալը.

- գնահատվել է ՀՀ-ում գործող առևտրային բանկերի ծառայությունների հասանելիությունն ըստ դրանց մասնաճյուղերին առնչվող հիմնական ցուցանիշների, բացահայտվել (կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծությամբ) ֆինանսական ծառայությունների հասանելիության ցուցանիշների և բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ հավելածի միջև փոխկապվածությունը, (5)
- մշակվել է ֆինանսական ծառայությունների հասանելիության գնահատման մեթոդի բարելավմանն առնչվող առաջարկություն՝ ըստ չափահաս բնակ-

չության խտության (1 կմ² հաշվով) և ըստ ՀՀ մարզերի ճշգրտված գործակիցների կիրառման, (5)

- առաջարկվել են ֆինանսական ծառայությունների հասանելիության ընդլայնման քաղաքականության սկզբունքային մոտեցումներ՝ ֆինանսական ծառայությունների հասանելիության աջակցության ինստիտուցիոնալ ենթակառուցվածքի, հանրային ռեսուրսների օգտագործման քաղաքականության և ֆինանսական ծառայությունների և դրանց մատակարարների գործունեության կարգավորման ներառմամբ, (4, 7)
- մշակվել է առևտրային բանկի մասնաճյուղերի ցանցի զարգացման հայեցակարգ՝ հիմնված առևտրային բանկի մասնաճյուղի սպասարկման տարածքի (հիմնական, երկրորդային և սպասարկման տարածքի սահման) դասակարգման և մասնաճյուղի սպասարկման կարողության վրա, ինչպես նաև առաջարկվել է առևտրային բանկի մասնաճյուղի գործունեության կարգավորման տնտեսական կառուցակարգ՝ ներքին տնտեսական նոմատիվների համալիրով հանդերձ (ավանդների ներգրավման նվազագույն չափի (Նա), վարկային ներդրումների սահմանային հարաբերակցության (ՆԿ) և շահութաբերության (ՆԶ) նորմատիվներ) (1, 2, 7, 8):

Աշխատանքի գործնական նշանակությունը: Աշխատանքի գործնական նշանակությունն առևտրային բանկերի մասնաճյուղային ցանցերի զարգացման և արդյունավետ գործունեության ապահովման և դրանց ծառայությունների հասանելիությանն առնչվող հետազոտության որոշ դրույթներն են: Մասնավորապես՝ մարզերում մասնաճյուղերի գնահատված քանակը կարող է հիմք հանդիսանալ համապատասխան մարզում այս կամ այն առևտրային բանկի մասնաճյուղի ստեղծման համար: Միաժամանակ, բանկային ծառայությունների հասանելիության բացահայտված հիմնախնդիրների լուծումը կարող է հիմք դառնալ առևտրային բանկերի տարածքային զարգացման ռազմավարություններ մշակելիս՝ կիրառելով ատենախոսի առաջարկած տարբերակման մոտեցումները: Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել մասնագիտական կրթության գործընթացում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսական հետազոտության որոշ դրույթներ ընդունվել են Արդշինի վեստրանկում՝ ներդրման համար: Հետազոտության արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսների, բանկային գործի և ապահովագրության ամբիոններում, ներկայացվել «ՀՀ և ՌԴ նորաստեղծական զարգացման հիմնախնդիրները» միջազգային (2011 թ.), «Ազգային տնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրները» (2012 թ.), «Տնտեսական զարգացման քաղաքականության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» (2013 թ.) ՀՊՏՀ գիտաժողովներում:

Ատենախոսական հետազոտության հիմնական արդյունքները և դրույթները հրապարակվել են գիտական 8 հոդվածում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը, առանց հավելվածների, կազմում է 145 էջ, պարունակում է 29 աղյուսակ, 18 գծապատկեր և 8 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍԻԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ


Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության առարկան և օբյեկտը, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, հիմնական արդյունքները, գիտական նորոյթը և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Առևտրային բանկի մասնաճյուղերի միջոցով ֆինանսական ծառայությունների հասանելիության ապահովման սոցիալ-տնտեսական նշանակությունը» գլխում, հայրենական և արտասահմանյան աղբյուրների խոր վերլուծությամբ, ատենախոսը քննարկել է ֆինանսական ծառայությունների հասանելիությանը և ֆինանսական ներառող համակարգին, առևտրային բանկի մասնաճյուղի էությանը, գործառույթներին, բանկային համակարգի համաշխարհային փոփոխությունների պայմաններում մասնաճյուղերի դերին ու նշանակությանը, ՀՀ-ում գործող առևտրային բանկերի և դրանց մասնաճյուղերի գործունեության օրենսդրական հիմքերի ձևավորմանն ու զարգացմանն առնչվող հարցերը: Առևտրային բանկի մասնաճյուղերի հատվածով, ֆինանսական ծառայությունների հասանելիության դիտարկման նպատակով, ատենախոսը նախ անդրադարձել է դրանց էությանը, գործառույթներին և ապա բացահայտել նշանակությունն այդ ծառայությունների մատուցման գործում: Բանկային համակարգի համաշխարհային փոփոխությունների պայմաններում մասնաճյուղերի դերի ու նշանակության դիտարկմամբ եզրակացվել է, որ մասնաճյուղերը և դրանց ցանցերը շարունակում են մնալ հաճախորդների համար որոշիչ գործոններ ֆինանսական ծառայությունների մատակարարների ընտրության, ֆինանսական հասանելիության ապահովման առումով:

Հիմք ընդունելով մի շարք հեղինակավոր աղբյուրներում հանդիպող սահմանումները՝ ատենախոսը սահմանազատել է «ֆինանսական հասանելիություն» և «ֆինանսական ներառում» հասկացությունները (գծապատկեր 1): Ֆինանսական հասանելիությունը սահմանել է որպես՝ առանց խտրականության, հասարակության բոլոր խմբերի պահանջմունքների բավարարման նպատակով ֆինանսական ծառայություններից օգտվելու հնարավորություն կամ բոլոր տեսակի գնային և ոչ գնային խոչընդոտների բացակայություն: Հասանելիությունը վերաբերում է տնային տնտեսություններին, որոնք օգտվում են առնվազն մեկ ֆինանսական ծառայությունից (օգտագործում), ինչպես նաև նրանց, ում հասանելի է ֆինանսական ծառայությունը, սակայն չեն օգտվում որևէ ֆինանսական ծառայությունից (ինքնամեկուսացում): Այս սահմանումը համապատասխանում է Համաշխարհային բանկի չափանիշին:

Ինքնամեկուսացումը վերաբերում է տնային տնտեսություններին, որոնց համար հասանելի է առնվազն մեկ ֆինանսական ծառայություն, սակայն նրանք դրա կարիքը չունեն և չեն օգտվում որևէ ֆինանսական ծառայությունից (կամավոր ինքնամեկուսացում): Անհասանելիությունը վերաբերում է տնային տնտեսություններին, որոնք ֆինանսական ծառայության պահանջարկ ունեն, սակայն ֆինանսական որևէ ծառայություն հասանելի չէ (ոչ կամավոր մեկուսացում): Անդրադառ-

նայով ներառող ֆինանսական հատվածին՝ ատենախոսը նշում է, որ դրա զարգացումը տնտեսական աճի շարժիչ ուժ է, որն անուղակիորեն նվազեցնում է աղքատությունն ու անհավասարությունը, համապատասխան և հարմարավետ ֆինանսական ծառայությունները կարող են բարելավել աղքատ մարդկանց կենսամակարդակը, նպաստել երկրի տարածքային համաչափ զարգացմանը:



Գծապատկեր 1. Ֆինանսների հասանելիության և օգտագործման արբերությունը. կամավոր և ոչ կամավոր մեկուսացում³

Հիմնվելով ուսումնասիրության արդյունքների վրա՝ ատենախոսը եզրահանգել է, որ ֆինանսական ծառայությունների հասանելիությունը կարող է ստեղծել բազմաթիվ դրական էֆեկտներ << տնտեսության և, ընդհանուր առմամբ, հասարակության համար. << մարզերում և հաճախորդների տարբեր՝ հատկապես ցածր եկամտով խմբերի ֆինանսական ներառում, ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի խթանում, ոչ ֆորմալ վարկային շուկայի ծավալի նվազեցում և այլն:

Ներկայացվել են ֆինանսական հասանելիության և ֆինանսական ներառման չափումների համար կիրառվող՝ Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի մեթոդաբանությունները: Ատենախոսն անդրադարձել է ֆինանսական ծառայությունների հասանելիության գործում առևտրային բանկի մասնաճյուղերի դերին ու նշանակությանը: Մասնավորապես՝ նա նկատում է, որ մասնաճյուղերի ցանցի առկայության պարագայում առևտրային բանկն ունի տնտեսական յուրահատուկ դեր, որը դրա տարածքայնությունն է և հնարավորություն է ընձեռում ներգրավելու նշանակալի թվով հաճախորդների գլխամասա-

³ Աղբյուր (ձևափոխված ատենախոսի կողմից)՝ Finance for all?: policies and pitfalls in expanding access. The World Bank, Washington DC, 2008, էջ 29: Global Financial Development Report 2014, Financial Inclusion. The World Bank, Washington DC, էջ 16:

յին գրասենյակից որոշակի հեռավորության վրա գտնվող այլ վայրերում՝ ապահովելով ծառայությունների ավելի բարձր հասանելիություն: Ինտերնետի ներթափանցումը և բանկոմատների տարածումը մարտահրավեր չի դառնում մասնաճյուղի միջոցով բանկային ծառայությունների տրամադրման ավանդական եղանակին:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ-ում գործող առևտրային բանկերի մասնաճյուղային ցանցերի զարգացման միտումները և ֆինանսական ծառայությունների հասանելիության ու օգտագործման գնահատումը» գլխում ատենախոսը, ՀՀ կենտրոնական բանկի, առևտրային բանկերի, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակումների, միջազգային կազմակերպությունների զեկույցներում առկա տվյալների հիման վրա ներկայացրել է ՀՀ-ում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի ցանցերի ձևավորման և զարգացման միտումները, գնահատել առևտրային բանկերի ծառայությունների հասանելիությունն ըստ դրանց մասնաճյուղերին առնչվող հիմնական ցուցանիշների, ինչպես նաև ֆինանսական ծառայությունների օգտագործման վիճակը ՀՀ-ում՝ միջազգային համեմատություններով: Գնահատվել է Արդշինինվեստբանկի ընդհանուր գործունեության մեջ մասնաճյուղերի մասնակցությունը, ինչի հիման վրա կատարվել են ՀՀ բանկային համակարգին առնչվող ընդհանրացումներ:

2000-2014 թթ. ՀՀ-ում գործող առևտրային բանկերի, դրանց մասնաճյուղերի քանակի շարժընթացը ներկայացված է գծապատկեր 1-ում: Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, 2014 թ. հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ-ում գործել է 21 առևտրային բանկ՝ 492 մասնաճյուղով: 2000-2014 թթ. մասնաճյուղերի քանակն ավելացել է 2.7 անգամ (գծապատկեր 3)⁴: Թեպետ, 2000 թ. համեմատությամբ, ՀՀ-ում գործող առևտրային բանկերի քանակը կրճատվել է 10-ով, այդուհանդերձ, մեկ բանկի հաշվով, 2014 թ. հուլիսի 1-ի դրությամբ մասնաճյուղերի քանակն ավելացել է ավելի քան 3.8 անգամ: Ֆինանսական ծառայությունների տեսանկյունից կարևորելով մասնաճյուղերի տեղաբաշխումը մարզերում, ատենախոսը դրանց քանակը համադրել է յուրաքանչյուր մարզի բնակչության թվաքանակի հետ և եզրահանգել, որ մասնաճյուղերի բաշխումն ընդհանուր առմամբ համապատասխանում է բնակչության բաշխմանը: Ըստ ատենախոսի՝ միայն մասնաճյուղերի քանակով հնարավոր չէ գնահատել ֆինանսական ծառայությունների հասանելիությունը, ուստի կիրառվում են այդ ծառայությունների հասանելիության ցուցանիշները: Վերջիններս միջազգային պրակտիկայում⁵ օգտագործվում են ներառող ֆինանսական համակարգերի ձևավորման ուղղությամբ երկրների առաջընթացը գնահատելու համար:

Ընդհանուր առմամբ, ՀՀ բանկային համակարգում նկատելի մասնաճյուղային ցանց ունեցող առևտրային բանկերի թիվը սահմանափակ է: Առևտրային բանկերը տարբերվում են միմյանցից՝ իրենց մասնաճյուղային ցանցերի զարգացման մակարդակով: Այսպես՝ մասնաճյուղային ցանցերով առանձնանում է 10 բանկ, ո-

⁴ Արցրյուր՝ Հայաստանի բանկային համակարգը (2007-ից՝ Հայաստանի ֆինանսական համակարգը), զարգացումը, վերահսկողությունը, կարգավորումը, 2004-2014 թթ.:

⁵ Definitions and Institutions for Completing the IMF'S Financial Access Survey (FAS) - 2013, p.1.

րոնց բաժին է հասնում 406 մասնաճյուղ կամ բոլոր մասնաճյուղերի 82.5%-ը (գծապատկեր 2): Ընդ որում, պետք է նկատել, որ մյուս բանկերը մասնաճյուղեր ստեղծել են հիմնականում Երևանում, իսկ վերոնշյալ 406 մասնաճյուղերից 252-ը կամ 62.1%-ը (ինչը մարզերում գործող մասնաճյուղերի ընդհանուր քանակի 80.2%-ն է) գործում են մարզերում: Մարզերում առևտրային բանկերի մասնաճյուղային ցանցի զարգացումը նպաստում է միջոցների ներգրավման և ներդրման հնարավորությունների մեծացմանը, բնակչության զգալի հատվածի համար բանկային ծառայությունների հասանելիության ընդլայնմանը, առևտրային բանկի ընդհանուր գործունեության մեջ մասնաճյուղերի մասնակցության աստիճանի բարձրացմանը: Միջազգային փորձը վկայում է⁶, որ մասնաճյուղային մեծ ցանցերը, մեկ մասնաճյուղի հաշվով, ներգրավում են ավելի մեծ ծավալի ավանդներ, քան փոքրերը: Մինչդեռ Հայաստանում պատկերն այլ է. որքան քիչ է մասնաճյուղերի քանակը, այնքան մեծ է մեկ մասնաճյուղին բաժին հասնող ավանդների ծավալը:


Առևտրային բանկերի մասնաճյուղային ցանցերի զարգացումը, ըստ առենախոսի, ընդհանուր առմամբ առնչվում է երկմիասնական խնդրի լուծմանը. մի կողմից՝ տնտեսական արդյունավետության, իսկ մյուս կողմից՝ բանկային ծառայությունների հասանելիության ապահովմանը: Տնտեսական արդյունավետության առումով, հարկ է նշել, որ յուրաքանչյուր մասնաճյուղ իր մասնակցությունն է ունենում ՀՀ ԿԲ սահմանած տնտեսական նորմատիվների կատարման գործում: Կախված առևտրային բանկի մասնաճյուղի տեղակայման վայրից, մրցակցային միջավայրից և այլ գործոններից՝ այս կամ այն մասնաճյուղն իր գործունեությամբ կարող է նպաստել նշված նորմատիվների պահպանմանը կամ, ընդհակառակը՝ բացասաբար ազդել դրանց վրա: Մյուս կողմից՝ առևտրային բանկի ներկայությունն այս կամ այն տարածաշրջանում ավելի տեսանելի, վարկանիշի առումով ավելի շահեկան է: Բացի դրանից, ֆինանսական ծառայությունների հասանելիության ապահովումը մասնաճյուղերի միջոցով լուծում է սոցիալական խնդիրներ բնակչության՝ հատկապես նրա խոցելի խմբերի, սպասարկման հարմարավետության առումով: Այսպիսով՝ խնդիրը հանգում է մասնաճյուղերի արդյունավետ տեղաբաշխմանը և դրանց կառավարման արդյունավետությանը:

Գծապատկեր 2-ից երևում է, որ առևտրային բանկերի մասնաճյուղերի քանակի աճին զուգընթաց բարձրացել է նաև դրանց կառավարման արդյունավետության մակարդակը՝ ըստ համախառն ակտիվների և մասնաճյուղերի քանակի հարաբերակցության: Այսպես՝ մասնաճյուղերի քանակի 2.1 անգամ աճի պայմաններում, կառավարման արդյունավետությունը բարձրացել է 3.8 անգամ:

Առևտրային բանկերի մասնաճյուղերի ցանցերի զարգացման, հետևաբար՝ բանկային գործունեության աշխարհագրական ընդլայնման և, այդպիսով, միջոցների ներգրավման ծավալների ու բանկային ծառայությունների հասանելիության մեծացման տեսակետից՝ կարևորվել է բանկերի գործունեության մեջ դրանց մասնակցության գնահատումը: Հիմնվելով Արդշինինվեստբանկի տասը մասնաճյու-

⁶ Տե՛ս, օրինակ՝ Berman, B., Evans, J., Retail Management: A Strategic Approach, 11/E Prentice Hall, 2010, էջ 297:

ղերի 2013 թ. տվյալների վրա, ատենախոսը փորձ է արել լուծելու այդ խնդիրը: Ստացված արդյունքները հիմք են հանդիսացել որոշ ընդհանրացումների համար: Այսպես՝ հաշվարկները ցույց են տալիս, որ բանկային համակարգի մասնաճյուղերի ցանցի մասնակցությունը ներգրավված միջոցների մասով կազմում է 22.8 %, իսկ տեղաբաշխված վարկերի մասով՝ 16.8%: Բացի այդ, մասնաճյուղերի ցանցի մասնակցությունն ընդհանուր եկամուտների ձևավորմանը կազմում է բանկային համակարգի եկամուտների 19.1%-ը, իսկ ծախսերի մասով՝ 25.9 %-ը: Մասնաճյուղային ցանցի մասնակցությունը ընդհանուր բանկային գործունեությանը ատենախոսը գնահատել է շուրջ 20%:




Գծապատկեր 2. Առևտրային բանկերի մասնաճյուղերի քանակը և կառավարման արդյունավետությունը 2000-2014 թթ.⁷

Ֆինանսական ծառայությունների հասանելիության գործում մասնաճյուղերի մասնակցության գնահատման նպատակով ատենախոսը դիտարկել է մի շարք ցուցանիշներ. մասնաճյուղերի քանակը (100 հազ. չափահաս բնակչի և երկրի տարածքի 1000 կմ² հաշվով), բանկերում առկա ավանդները (ՀՆԱ-ի %), ավանդային հաշիվները բանկերում (1000 չափահաս բնակչի հաշվով), տնային տնտեսությունների ավանդային հաշիվները բանկերում (1000 չափահաս բնակչի հաշվով), բանկերի կողմից տրամադրված վարկերը (ՀՆԱ-ի %): Ֆինանսական ծառայությունների հասանելիության՝ Արժույթի միջազգային հիմնադրամի անցկացրած հետազոտությունների արդյունքներով 2013 թ. ՀՀ-ում 100 հազ. չափահաս բնակչին բաժին է ընկել 21.4 բանկային մասնաճյուղ: Դա մոտ է կամ նույնիսկ գերազանցում է զարգացած որոշ երկրների ցուցանիշները (օրինակ՝ ԱՄՆ-ում այն կազմում է 33,88, Ֆրանսիայում՝ 38,71, Գերմանիայում՝ 13.90⁸, Շվեդիայում՝ 21,72): 100 հազ. չափահաս բնակչի հաշվով, առևտրային բանկերի քանակի աճի

⁷ Կազմվել է ատենախոսի կողմից՝ ՀՀ կենտրոնական բանկի և առևտրային բանկերի պաշտոնական կայքերի տեղեկատվության հիման վրա:

⁸ 2014 FAS. IMF's Statistics Department (fas.imf.org)

տեմպերով Հայաստանը գիշում է միայն ամֆրիկյան տարածաշրջանին (գծապատկեր 3). 2004 թ. համեմատությամբ, 2012 թ. Հայաստանի ցուցանիշի աճը կազմել է 170%, իսկ Աֆրիկայինը՝ 178%: «Մասնաճյուղերի քանակ» ցուցանիշը ներառում է բոլոր միավորները, որոնք ֆիզիկականորեն առանձնացված են առևտրային բանկի գլխամասային գրասենյակից և չեն համարվում առանձնացված անկախ ստորաբաժանում: Ընդ որում, գլխավոր գրասենյակների քանակը չի ներառվում այդ ցուցանիշում⁹:



Գծապատկեր 3. Առևտրային բանկերի մասնաճյուղերը 100 հազ. չափահաս բնակչի հաշվով (2004=100%)¹⁰

100 հազ. չափահաս բնակչի հաշվով, առևտրային բանկերի մասնաճյուղերի քանակը ներկայացնում է ժողովրդագրական ներթափանցումը բանկային հատվածում՝ բանկերի ֆիզիկական կետերի հասանելիության տեսանկյունից: Բարձր աստիճանի ներթափանցումը նշանակում է մեծաթիվ մասնաճյուղեր և, հետևաբար՝ բանկային համակարգի ավելի մեծ հասանելիություն: Դա ենթադրում է, որ գոյություն ունի դրական փոխկապվածություն այդ հարաբերության և բանկային գործի արդյունավետության միջև: Մասնաճյուղերի ներթափանցումը բնակչության շրջանում դրական կապի մեջ է ավանդների և վարկերի ներթափանցման հետ և, ի վերջո, բարելավում է շահութաբերության ցուցանիշը¹¹: 1000 կմ² հաշվով, բանկերի մասնաճյուղերի քանակն արտահայտում է բանկային հատվածի աշխարհագրական ներթափանցումը՝ բանկերի ֆիզիկական կետերի մատչելիության տեսանկյունից: 1000 կմ² բարձր աստիճանի ներթափանցումը նշանակում է աշխարհագրորեն տարածված ավելի մեծաթիվ մասնաճյուղեր, հետևաբար՝ բանկային ծառայությունների ավելի մեծ հասանելիություն: Այդուսակ 1-ում ներկայացված է վերոնշյալ ցուցանիշների շարժը 2004-2013 թթ.:

⁹ Definitions and Institutions for Completing the IMF's Financial Access Survey (FAS) – 2013, p. 4. (<https://www-ics.imf.org/ICS/pdf/FAS%20DEFINITIONS%20AND%20INSTRUCTIONS.PDF>)

¹⁰ Աղբյուր (ձևափոխված աղբյուրի կողմից)՝ 2013 FAS. IMF's Statistics Department, 2013, էջ 1:

¹¹ Abdullah, Z.. A Critical Review of the Impact of ATMs in Malaysia. *Banker's Journal Malaysia*, 1985, 28,13-16.

Ֆինանսական ծառայությունների հասանելիությունը և օգտագործումն ըստ ՀՀ առևտրային բանկերի մասնաճյուղերի քանակի¹²

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Մասնաճյուղերի քանակը (1000 կմ ² հաշվով)	8,88	10.11	11.24	12.96	14.15	14.50	16.10	16.26	17.35	16,56
Մասնաճյուղերի քանակը (100 հազ. չափահաս բնակչի հաշվով)	10,79	12.23	13.56	15.63	17.09	17.53	18.25	19.63	20.89	19.8

Ակնհայտ է, որ ֆինանսական ծառայությունների հասանելիությունը և օգտագործումն ըստ ՀՀ առևտրային բանկերի մասնաճյուղերի քանակի, տարբերվում է մարզից մարզ: Վերոնշյալ ցուցիչների հաշվարկն ըստ մարզերի կարևորվում է ֆինանսական ծառայությունների հասանելիության գնահատման, ինչպես նաև հիմնախնդիրների թիրախավորման տեսանկյունից: Կատարված հաշվարկների արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Ֆինանսական ծառայությունների հասանելիությունը և օգտագործումն ըստ ՀՀ առևտրային բանկերի մասնաճյուղերի քանակի (ըստ ՀՀ մարզերի, 2014 թ. դրությամբ)¹³

Մարզեր	Մարզում գործող մասնաճյուղերի քանակը	Մասնաճյուղերի քանակը (1000 կմ ² հաշվով)	Մասնաճյուղերի քանակը (100 հազ. չափահաս բնակչի հաշվով)
ք. Երևան	224	1004.48 (224)	25.49
Արագածոտնի	20	7.25	15.14
Արարատի	22	10.52	8.45
Արմավիրի	25	20.13	9.37
Գեղարքունիքի	28	5.23	10.49
Լոռու	41	10.79	17.81
Կոտայքի	42	20.13	16.49
Շիրակի	32	11.94	12.92
Սյունիքի	27	5.99	19.19
Վայոց ձորի	11	4.76	21.36 ()
Տավուշի	20	7.39	15.71
ՀՀ	492	16.54	19.72

Ծանոթություն. ՀՀ մարզերում առևտրային բանկերի մասնաճյուղերի քանակին անընչապես տվյալները ստացվել են հեղինակի կատարած ուսումնասիրությամբ:

Ըստ առենախոսի՝ ՀՀ մարզերում, ըստ մասնաճյուղերի քանակի, ֆինանսական ծառայությունների հասանելիության ցուցանիշները դրանց սոցիալ-տնտեսական զարգացման անհամամասնությունների արտացոլումն են: Թեպետ երկրի

¹² Աղբյուր՝ Financial Accses Survy. IMF. (<http://fas.imf.org/>). 2013 թ. ցուցանիշները հաշվարկել է առենախոսը:
¹³ Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2014 թ. ապրիլի 1-ի դրությամբ, Եր., ՀՀ ԱՎՄ, 2014, էջ 7: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2013, էջ 12:

սոցիալ-տնտեսական զարգացման արդյունքում է մեծանում ֆինանսական ծառայությունների պահանջարկը, այդուհանդերձ, որպես տնտեսության կարևոր ու դինամիկ զարգացող հատված, բանկային համակարգի զարգացումն ինքնին նպաստում է այդ զարգացմանը՝ շնորհիվ զբաղվածության մակարդակի, մատուցվող ծառայությունների տեսակների և դրանց ծավալների ավելացման: Հետևաբար՝ մասնաճյուղերի միջոցով ֆինանսական ծառայությունների հասանելիության և օգտագործման անհամաչափությունը, ըստ մարզերի, ատենախոսը համարում է հիմնախնդիր և կարծում, որ ՀՀ ԿԲ համապատասխան քաղաքականության դեպքում հնարավոր է որոշակիորեն մեղմել այն:

Ատենախոսն առաջարկում ԱՄՀ մեթոդաբանության մեջ կատարել որոշ բարելավումներ՝ հաշվարկների համար հիմք ընդունելով նաև չափահաս բնակչության խտությունը: Նպատակահարմար է դիտվել համապատասխան ճշգրտումների կատարումը՝ հիմք ընդունելով ատենախոսի առաջարկած գործակիցները: Մանրամասն նկարագրվել են առաջարկվող մոտեցման կիրառման քայլերը. հաշվարկել են մարզերի չափահաս բնակչության խտության գործակիցները հետևյալ բանաձևով¹⁴.

$$G_{2F} = \frac{U_{2F}}{2.2F^2}$$

որտեղ՝ G_{2F} -ն մարզի (երևան քաղաքի), ըստ չափահաս բնակչության խտության, ճշգրտման գործակիցն է, C_{2F} -ն՝ Հայաստանի Հանրապետության չափահաս բնակչության խտությունը 1 կմ² հաշվով, U_{2F} -ն՝ համապատասխան մարզի չափահաս բնակչության խտությունը 1 կմ² հաշվով: Այնուհետև, G_{2F} -ները հաշվարկելուց հետո, յուրաքանչյուր մարզում մասնաճյուղերի քանակը որոշվել է հետևյալ բանաձևով.

$$U_{P^1} = G_{2F} * U_{P_{1000}}$$

որտեղ U_{P^1} -ն G_{2F} -ով մասնաճյուղերի ճշգրտված քանակն է համապատասխան մարզում, $U_{P_{1000}}$ -ը՝ մասնաճյուղերի քանակը 1000 կմ² հաշվով:

Քանի որ U_{P^1} -ն չի ենթադրում տարբերակում ըստ մարզի տարածքի, ապա ստացված ցուցանիշը ճշգրտվել է: Ըստ չափահաս բնակչության խտության և մարզի տարածքի՝ առաջարկվել է մասնաճյուղերի օպտիմալ քանակի հաշվարկման հետևյալ բանաձևը.

$$U_{P^2} = \frac{s}{1000} * U_{P^1}$$

որտեղ՝ S -ն համապատասխան մարզի տարածքն է (կմ²):

Առաջարկվող մոտեցմամբ, ըստ ՀՀ մարզերի, առևտրային բանկերի մասնաճյուղերի օպտիմալ քանակի հաշվարկի արդյունքները ներկայացված են աղյուսակ 3-ում: Աղյուսակի տվյալներից երևում է, որ Երևանը մասնաճյուղերով հագեցված է՝ ՀՀ տնտեսության զարգացման ներկա մակարդակի պայմաններում: Մայրաքաղաքում առևտրային բանկերի մասնաճյուղերի օպտիմալ քանակը, ըստ կիրառված մեթոդաբանության, պետք է լինի 176: Մինչդեռ մարզերում բավական անհամաչափ է դրանց բաշխումը, եթե հիմք ընդունվի չափահաս բնակչության

¹⁴ Բանաձևն առաջարկել է ատենախոսը:

խտությունը՝ վերոնշյալ ճշգրտումներով հանդերձ: ՀՀ-ի համար, ըստ ատենախոսի, օպտիմալ քանակը 527-ն է: Եթե մայրաքաղաքում օպտիմալացման հարց չդրվի, ապա մարզերում, ֆինանսական ծառայությունների հասանելիության նկատառումներից ելնելով, հարկ կլինի ստեղծել ևս 94 մասնաճյուղ: Ակնհայտ է, որ, տնտեսական արդյունավետության տեսանկյունից, այդ խնդիրը լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի: Սակայն պետք է նկատել, որ տարածքային զարգացման համաչափության հասնելու ուղիներից է նաև տնտեսության կայացած հատվածներից մեկի՝ բանկայինի համաչափ ներթափանցումը մարզեր:

Աղյուսակ 3

Ըստ ՀՀ մարզերի՝ առևտրային բանկերի մասնաճյուղերի օպտիմալ քանակի հաշվարկի արդյունքները

Մարզեր	Գձբխ	ՄՃ ¹	ՄՃ ² (կլորաց.)	Բանկերի մասնաճյուղերի քանակը	Շեղում փաստացից. (-)՝ պակաս է, (+)՝ ավելի է
ք. Երևան	47.4	174.99	176	224	48
Արագածոտնի	0.46	7.6	21	20	-1
Արարատի	1.22	20.17	42	22	-20
Արմավիրի	2.13	35.23	44	25	-19
Գեղարքունիքի	0.43	7.11	37	28	-9
Լոռու	0.6	9.92	38	41	3
Կոտայքի	1.2	19.84	78	42	-36
Շիրակի	0.91	15.05	40	32	-8
Սյունիքի	0.31	5.12	23	27	4
Վայոց ձորի	0.21	3.03	7	11	4
Տավուշի	0.47	7.77	21	20	-1
Ընդամենը	-	-	527	492	-35

Ֆինանսական ծառայությունների հասանելիության մյուս կարևոր ցուցիչը վերաբերում է ավանդներին: Դրանք լինում են խնայողական, ժամկետային, ցպահանջ: Հետազոտության շրջանակում ավանդներին առնչվող հաշվարկները ներկայացված են ըստ 3 ցուցանիշների. բանկերում առկա ավանդներ, ավանդային հաշիվներ բանկերում, տնային տնտեսությունների ավանդային հաշիվներ բանկերում:

Ավանդներին առնչվող ցուցանիշների շարժընթացը 2004-2013 թթ. ներկայացված է աղյուսակ 4-ում: Աղյուսակի տվյալներից երևում է, որ 2004-2013 թթ. ընթացքում տեղի է ունեցել ավանդներին վերաբերող երեք ցուցանիշների նշանակալի բարելավում, ինչը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է տնտեսական ակտիվության և տնային տնտեսությունների եկամուտների աճով:

Բանկերի տրամադրած վարկերը (ՀՆԱ, %) ոչ ֆինանսական կազմակերպություններին և տնային տնտեսություններին տրված, սակայն դեռևս չմարված վարկերն են (ներառյալ հաշվարկված տոկոսավճարները)¹⁵: ՀՀ առևտրային բանկերի կողմից տրված վարկերի և համախառն ներքին արդյունքի հարաբերակցությունը 2004-2013 թթ. ներկայացված է աղյուսակ 5-ում: Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, 2004 թ. համեմատությամբ այդ ցուցանիշն աճել է գրեթե 5.4 ան-

¹⁵ Definitions and Institutions for Completing the IMF'S Financial Access Survey (FAS) - 2013, p. 6.
(<https://www-ics.imf.org/ICS/pdf/FAS%20DEFINITIONS%20AND%20INSTRUCTIONS.PDF>)

զամ, ինչը դրական երևույթ է երկրի տնտեսության և տնային տնտեսությունների զարգացման տեսանկյունից, արտացոլում է ֆինանսական հասանելիության որոշակի բարելավման միտում:

Աղյուսակ 4

Ֆինանսական ծառայությունների հասանելիությունը և օգտագործումն ըստ ՀՀ առևտրային բանկերի ավանդների¹⁶

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Բանկերում առկա ավանդները (ՀՆԱ-ի %)	12.07	11.91	11.68	13.56	13.90	20.44	22.01	27.09	30.44	35.6
Ավանդային հաշիվները բանկերում (1000 չափահաս բնակչի հաշվով)	214.63	362.28	373.64	467.96	478.91	544.27	614.08	744.26	887.13	1061.51
Տնային տնտեսությունների ավանդային հաշիվները բանկերում (1000 չափահաս բնակչի հաշվով)	194.90	340.29	349.78	438.03	443.45	494.51	565.43	692.77	831.70	1002.19

Աղյուսակ 5

Ֆինանսական ծառայությունների հասանելիությունը և օգտագործումն ըստ ՀՀ առևտրային բանկերի տրամադրած վարկերի¹⁷

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Բանկերի տրամադրած վարկերը (ՀՆԱ-ի %)	7.46	8.40	9.09	13.65	17.76	23.01	26.58	33.09	40.33	40.0

Ատենախոսը, բանկի մասնաճյուղերի տեսանկյունից, ավելի բնութագրական է համարել հետևյալ ցուցանիշները. մասնաճյուղերի քանակը 100 հազ. չափահաս բնակչի հաշվով, մասնաճյուղերի քանակը 1000 կմ² հաշվով, բանկերում առկա ավանդները (ՀՆԱ-ի %), ավանդային հաշիվները բանկերում (1000 չափահաս բնակչի հաշվով), բանկերի տրամադրած վարկերը (ՀՆԱ-ի %): Այդ ցուցանիշների և ՀՆԱ-ի միջև փոխկապակածության բացահայտման նպատակով կիրառվել է կոռելյացիոն-ռեգրեսիոն մեթոդը: Դիտարկվել է հետևյալ հինգ փոփոխականները ներառող ֆունկցիան. $y=f(x_1, \dots, x_5)$, որտեղ՝ y -ը ՀՆԱ-ն է մեկ շնչի հաշվով (հազ. դրամ), x_1 -ը՝ առևտրային բանկերի մասնաճյուղերի քանակը (1000 կմ² հաշվով), x_2 -ը՝ առևտրային բանկերի մասնաճյուղերի քանակը (100 հազ. չափահաս բնակչի հաշվով), x_3 -ը՝ առևտրային բանկերում առկա ավանդները (ՀՆԱ-ի %), x_4 -ը՝ ավանդային հաշիվներն առևտրային բանկերում (1000 չափահաս բնակչի հաշվով), x_5 -ը՝ առևտրային բանկերի տրամադրած վարկերը (ՀՆԱ-ի %): Նշված ցուցանիշ-

¹⁶ Կազմել է ատենախոսը՝ ըստ հետևյալ աղբյուրների. Հայաստանի ֆինանսական համակարգը. զարգացումը, վերահսկողությունը, կարգավորումը: Եր., ՀՀ ԿԲ, 2014, էջ 31: Պարենային ապահովություն և աղքատություն, 2014 թ. հունվար-հունիս, ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 9: Financial Access Survy. IMF. (<http://fas.imf.org/>).

¹⁷ Կազմել է ատենախոսը՝ ըստ հետևյալ աղբյուրների. Հայաստանի ֆինանսական համակարգը. զարգացումը, վերահսկողությունը, կարգավորումը: Եր., ՀՀ ԿԲ, 2014, էջ 33: Պարենային ապահովություն և աղքատություն, 2014 թ. հունվար-մարտ, ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 9: Financial Access Survy. IMF. (<http://fas.imf.org/>):

ներին անչվող տվյալներն օգտագործվել են արդյունքային փոփոխականի՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի վրա գործոնների ազդեցության աստիճանը գնահատելու համար: Մեթոդաբանության հիմքում բազմանդամ ռեգրեսիայի հավասարումն է: Միջին քառակուսային շեղման, կոռելյացիայի զույգ և ռեգրեսիայի գործակիցների հաշվարկների արդյունքները ներկայացված են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

Միջին քառակուսային շեղման, կոռելյացիայի զույգ և ռեգրեսիայի գործակիցների հաշվարկների արդյունքները

Փոփոխականները	Միջին քառակուսային շեղումները	Կոռելյացիայի զույգ գործակիցները					Ռեգրեսիայի հավասարման գործակիցները	
		y	x ₁	x ₂	x ₃	x ₄		x ₅
Y	234.71	1.00					106.63	
x ₁	2.93	0.95	1.00				-40.33	
x ₂	3.40	0.96	0.99	1.00			72.55	
x ₃	8.71	0.88	0.85	0.86	1.00		-16.94	
x ₄	258.54	0.95	0.89	0.90	0.97	1.00	0.97	
x ₅	12.72	0.93	0.94	0.94	0.98	0.96	1.00	2.30

Արդյունքային և գործոնային փոփոխականների կոռելյացիայի զույգ գործակիցների վերլուծությունը հեղինակին հնարավորություն է ընձեռել եզակացություններ անելու հետևյալի կապերի առկայության մասին.

- մեկ շնչի հաշվով ՀՆԱ աճի և առևտրային բանկերի մասնաճյուղերի քանակի (1000 կմ² և 100 հազ. չափահաս բնակչի հաշվով) (x₁, x₂) միջև ուժեղ անմիջական կապի,
- մեկ շնչի հաշվով ՀՆԱ աճի և առևտրային բանկերում առկա ավանդների (ՀՆԱ-ի %) (x₃) միջև ուժեղ անմիջական կապի,
- մեկ շնչի հաշվով ՀՆԱ աճի և առևտրային բանկերում ավանդային հաշիվների (1000 չափահաս բնակչի հաշվով) (x₄) միջև ուժեղ անմիջական կապի,
- մեկ շնչի հաշվով ՀՆԱ աճի և առևտրային բանկերի տրամադրած վարկերի (ՀՆԱ-ի %) (x₅):

Մոդելի կառուցման համար օգտագործվել են գործոնային հինգ փոփոխականներ, և ստացվել է բազմանդամ ռեգրեսիայի հետևյալ հավասարումը.

$$y=106.63-40.33x_1+72.55x_2-16.94x_3+0.97x_4+2.30x_5:$$

Հաշվարկները ցույց են տվել, որ դետերմինացիայի գործակից R²-ն ունի բարձր արժեք՝ 0.97, ինչը փաստում է գործոնների բարձր աստիճանի բացատրելիությունը: Ռեգրեսիայի հավասարման վիճակագրական նշանակալիությամբ գնահատվել է Ֆիշերի F չափանիշը, որի փաստացի արժեքը 31.78 է:

Նկատի ունենալով, որ ֆինանսական ծառայությունների հասանելիությունն առնչվում է դրանց առաջարկին, ինչպես նաև հաշվի առնելով ֆինանսական ինքնամեկուսացման երևույթը, հեղինակը կարևորել է զուտ ֆինանսական ծառայությունների օգտագործման, այսինքն՝ դրանց պահանջարկի տեսակետից խնդրի դիտարկումը:

ՀՀ-ում ֆինանսական ծառայությունների օգտագործման վիճակը (ըստ բանկային հաշիվների, խնայողությունների վարքագծի և փոխառությունների աղբյուրների) դիտարկվել է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի համապատկերում: Հարավային Կովկասի տարածաշրջանում Վրաստա-

նը զբաղեցնում է առաջատար դիրք, ապա հետևում են Հայաստանը, Ադրբեջանը: Ուշագրավ է, որ, ըստ եկամտի (ստորին 40%) հաշիվների թվի, Վրաստանը բավական առաջ է անցել մյուս երկու երկրներից: Թեպետ ողջ աշխարհում միջազգային դրամական փոխանցումները կարևոր դեր են խաղում մարդկանց կյանքում, սակայն դրանք առավել կարևոր տնտեսական նշանակություն ունեն Վրաստանում և Հայաստանում. ՀՆԱ 9%-ը՝ Վրաստանում¹⁸ և 15.4 %-ը՝ Հայաստանում (2013 թ.)¹⁹:

Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում և Եվրոպայի (միայն զարգացող երկրներ) ու Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում, փոխառությունների աղբյուրների համաձայն, վերլուծվել է ֆինանսական ծառայությունների օգտագործման վիճակը: Ըստ ընտանիքից կամ ընկերներից ստացված վարկերի՝ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի միջին ցուցանիշը (28%) գերազանցում է Հայաստանը (32%), մոտ է Ադրբեջանը (27%), իսկ վերջինը Վրաստանն է (14%): Ընդհանուր առմամբ, տարածաշրջանային այս ցուցանիշի բարձր լինելը հիմնականում պայմանավորված է ազգային յուրահատկություններով: Ըստ նախորդ տարում ֆինանսական հաստատություններից ստացված վարկերի (15 և ավելի բարձր տարիքի բնակչության %)՝ Հայաստանի ցուցանիշը (19%) բարձր է ինչպես տարածաշրջանային միջինից (8%), այնպես էլ Ադրբեջանից (18%) և Վրաստանից (11%), ինչն արտացոլում է ՀՀ բանկային վարկավորման բնագավառի որոշակի ձեռքբերումները: Ըստ կրեդիտորական քարտերի՝ Հայաստանի ցուցանիշը ցածր է ինչպես տարածաշրջանային միջինից, այնպես էլ Հարավային Կովկասի երկրների ցուցանիշներից: Դեբիտորական քարտերի ցուցանիշով Հայաստանը նույնպես զիջում է նշված երկրներին և բավական հեռու է միջին տարածաշրջանային ցուցանիշից. տարածաշրջանի միջինը՝ (36%), ինչը վկայում է ոչ թե այդ ծառայության անհասանելիության, այլ դրանից օգտվելու ցանկության բացակայության մասին: Ըստ բնակչության խնայողությունների վարքագծի՝ Հայաստանի ցուցանիշները բավական համեստ են հարևան երկրների և տարածաշրջանային միջինի համեմատությամբ: Այսպես՝ ֆինանսական հաստատություններում խնայողություններ է ունեցել 15 և ավելի բարձր տարիքի ՀՀ բնակչության 1%-ը (տարածաշրջանայինը՝ 7%), մինչդեռ խորհրդային տարիներին Հայաստանը մեկ շնչին բաժին ընկնող խնայողություններով զբաղեցրել է առաջին տեղը: Ընդհանուր առմամբ, տարածաշրջանի երկրները միջին ցուցանիշով գրեթե 7 անգամ զիջում են բարձր եկամտային խմբի երկրներին և 2%-ով՝ միջին բարձր եկամտով երկրներին:


Բնակչության մեկ շնչի հաշվով, ազգային համախառն եկամտի ցուցանիշը մեկնաբանում է բանկային հաշիվների ներթափանցման տարբերությունների մեծ մասը: 2006-2010 թթ. 29 անցումային տնտեսությունների 60 հազ. տնային տնտեսությունների տվյալների հիման վրա կատարված ռեգրեսիոն վերլուծությամբ²⁰

¹⁸ Enabling International Remittance Services in Georgia. <http://www.cgap.org/blog/enabling-international-remittance-services-georgia>

¹⁹ Պարենային ապահովություն և աղքատություն, 2014 թ. հունվար-հունիս: ՀՀ ԱԿԾ, էջ 9: Հայաստանի Հանրապետության արտաքին հաշիվներ, 2014, էջ 34:

²⁰ Beck T. and M. Brown, 2011. Use of Banking Services in Emerging Markets: Household-Level Evidence. European Banking Center Discussion Paper 2011-024, Tilburg University, Netherlands. (տե՛ս <https://ideas.repec.org/p/cpr/ceprdp/8475.html>)

պարզվել է, որ ազգային եկամտով կարելի բացատրել ֆորմալ ֆինանսական հաստատություններում չափահաս մարդկանց հաշիվների քանակի փոփոխության շուրջ 70%-ը: Այդուհանդերձ, ցածր եկամտով ստորին 50%-ի հաշվով, ՀՆԱ-ի և հաշիվների ներթափանցման միջև կապն ավելի թույլ է²¹: Ատենախսի կողմից 50 երկրների տվյալների հիման վրա կատարված ռեգրեսիոն վերլուծությունը ապացուցում է այդ եզրահանգումները (գծապատկեր 4):



Գծապատկեր 4. Ֆորմալ ֆինանսական հաստատություններում չափահաս մարդկանց հաշիվները²²


Ելնելով վերոնշյալից՝ ատենախոսը եզրակացրել է, որ ֆինանսական ծառայությունների օգտագործման վիճակը բնութագրում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, ինչպես նաև բնակչության եկամտոնների մակարդակը: Ֆինանսական ծառայությունների օգտագործման վիճակը պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես՝ բնակչության խնայողությունների ձևավորման շարժառիթային վարքագծի անմիջական ազդեցությամբ: Ֆինանսական ծառայությունների օգտագործման վրա որոշակի ազդեցություն ունի նաև դրանց հասանելիությունը: Այսպիսով՝ վերջին տասը և ավելի տարիներին ՀՀ բանկային համակարգը նշանակալի առաջընթաց է ունեցել, ինչը նպաստել է ֆինանսական ծառայությունների հասանելիության աստիճանի որոշակի բարձրացմանը: Այդ մասին է վկայում այնպիսի ցուցանիշների բարելավումը, ինչպիսին են առևտրային բանկերի մասնաճյուղերի և բանկոմատների քանակը, ավանդներին և վարկերին առնչվող տվյալները: Չնայած դրան, ՀՀ-ում ֆինանսական ծառայությունների հասանելիության մակարդակը, ըստ մի քանի ցուցանիշների, նշանակալիորեն ցածր է զարգացած երկրների մակարդակից: Ուսումնասիրությամբ բացահայտված հիմնախնդիրների հաղթահարմամբ, ըստ ատենախոսի, հնարավոր կլինի կարճաժամկետում ՀՀ-ում ֆինանսական ծառայությունների հասանելիության մակարդակը մոտեցնել զարգացած տնտեսությամբ երկրների մակարդակին: Այդ առումով, կարևորվում է առևտրային բանկերի մասնաճյուղերի ցանցերի զարգացումը,

²¹ Asli Demirguc-Kunt, Leora Klapper, Measuring Financial Inclusion. The Global Findex Database. The World Bank Development Research Group Finance and Private Sector Development Team. April 2012, p.12.

²² <http://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD>

առևտրային բանկերի կողմից տարածքային զարգացման համապատասխան ազանավարությունների մշակումն ու իրագործումը:

Ատենախոսության երրորդ՝ «**Ֆինանսական ծառայությունների հասանելիության ընդլայնման հնարավոր ուղիները**» գլխում ներկայացվել են ֆինանսական ծառայությունների հասանելիության ընդլայնման և կամավոր ու ոչ կամավոր ֆինանսական մեկուսացման հաղթահարման քաղաքականության, առևտրային բանկի մասնաճյուղերի՝ որպես ֆինանսական ծառայությունների մատակարարների գործունեության կարգավորման, ինչպես նաև մասնաճյուղերի ցանցի զարգացման հայեցակարգային մոտեցումները: Տնտեսական աճի, տարածական համաչափ զարգացման և այդ ճանապարհով աղքատության հաղթահարման նկատառումներից ելնելով՝ ատենախոսն առաջարկել է ֆինանսական հասանելիության ընդլայնման և կամավոր ու ոչ կամավոր ֆինանսական մեկուսացման հաղթահարման քաղաքականության հայեցակարգային դրույթների շրջանակը, որը ներառում է հասանելիության աջակցության ինստիտուցիոնալ ենթակառուցվածքը, ֆինանսական ծառայությունների և դրանց մատակարարների գործունեության կարգավորումը, հանրային ռեսուրսների օգտագործմանն առնչվող քաղաքականությունը (զձապատկեր 5):



Գձապատկեր 5. Ֆինանսական ծառայությունների հասանելիության ընդլայնման և կամավոր ու ոչ կամավոր մեկուսացման հաղթահարման քաղաքականության հայեցակարգային շրջանակը

Հասանելիության աջակցության ինստիտուցիոնալ ենթակառուցվածքը ներառում է առևտրային բանկերի միջև մրցակցության և նրանց կողմից մասնաճյուղերի ստեղծման խթանումը, իրավական և տեղեկատվական հաստատությունների ենթակառուցվածքի ձևավորումը, իրազեկված պահանջարկի խթանումը:

Ֆինանսական ծառայությունների խելամիտ կարգավորումը կարևոր է ֆինանսական համակարգի անվտանգության և կայունության ապահովման տեսանկյունից, ինչի արդյունքում ձեռք է բերվում է հասանելիության կայունություն: Քաղաքականության այս խմբում առաջարկվող սկզբունքները, ըստ ատենախոսի, չպետք է հակասեն Բազել II-ի շրջանակներում շարադրված «Արդյունավետ բանկային վերահսկողության հիմնական սկզբունքներին»²³, «Միկրոֆինանսավորման բնագավառում կարգավորման և վերահսկողության ղեկավար սկզբունքներին»²⁴:

Շուկայական անհաջողությունները, ըստ տարածված կարծիքի, առնչվում են ֆինանսների հիմնախնդրին: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը ցույց տվեց, որ վստահությունը չի կարող վերականգնվել բացառապես ֆինանսական ծառայությունների հասանելիության շուկայական լուծումների հիման վրա: Այն առաջ բերեց լայն տիրույթի հանրային նախաձեռնություններ, որոնք մշակվեցին տարբեր նպատակների և հատվածների համար վարկերը պաշտպանելու կամ վարկավորումը վերսկսելու նպատակով: Այդուհանդերձ, ատենախոսը կարծում է, որ ոչ մի հիմք չկա ենթադրելու, թե հայտնաբերվել է կառավարություններին անհաջողություններից զերծ պահելու դեղամիջոց, որը տասնամյակների ընթացքում լայնորեն տարածվել է ֆինանսների բնագավառում: Հետևաբար՝ միջամտությունը մնում է անհրաժեշտ հանգամանք, քանի որ առանց Կառավարության ֆինանսավորման հնարավոր չէ խուսափել շուկայական անհաջողություններից, մասնավորապես՝ դրամի արժեզրկումից: Միաժամանակ, ըստ ատենախոսի, Կառավարությունը կարող է նպաստել ֆինանսական ծառայությունների հասանելիության ընդլայնմանը՝ «ֆինանսական ծառայությունների շուկայի հետ ԿԲ-ի և կառավարության դերի հաշվեկշռում», «փոխառությունների և հարկերի արդյունավետ կիրառում» սկզբունքների գործադրմամբ: Օրինակ՝ առևտրային բանկի տոկոսային եկամտից (վարկերի տոկոսներից ձևավորվող) գանձվող հարկերը, որոշ դեպքերում, հանգեցնում են կամավոր ֆինանսական մեկուսացման՝ «գնալին խոչընդոտներ» պատճառով: Ֆինանսական գործառնությունների հարկերը նույնպես կարող են խոչընդոտել ֆորմալ ֆինանսական միջնորդների ծառայություններից օգտվելուն՝ սահմանափակելով հասանելիությունը: Այնտեղ, որտեղ չի հաջողվում հավասար հարկել տարբեր մատակարարների, մրցակցությունը կարող է աղավաղվել և նույնիսկ բացառել հասանելիությանն առնչվող նախաձեռնությունները, եթե հարկերը բարձր են:

Ֆինանսական հասանելիության ընդլայնման քաղաքականության՝ նշված երեք բաղադրիչներում պարունակվող սկզբունքներից յուրաքանչյուրը, ըստ հեղինակի, կարող է նպաստել կամավոր կամ ոչ կամավոր ֆինանսական մեկուսացման որևէ կողմի հաղթահարմանը: Այսպես օրինակ՝ «ծառայությունների մատա-

²³ Sb'u Core Principles for Effective Banking Supervision. Basel Committee on Banking Supervision. October 2006, էջ 7:

²⁴ CGAP Microfinance Consensus Guidelines: Guiding Principles on Regulation and Supervision of Microfinance. March, 2002, 28 p.

կարարների անվտանգության և հուսալիության ապահովում» սկզբունքի կիրառումը կոչված է չեզոքացնելու ֆինանսական ինքնամեկուսացման պատճառներից մեկը՝ «բարձր ռիսկը», «առևտրային բանկերի միջև մրցակցության և նրանց կողմից մասնաճյուղերի ստեղծման խթանում», «փոխառությունների և հարկերի արդյունավետ կիրառում» սկզբունքները՝ ոչ կամավոր մեկուսացման «ոչ անմիջական հասանելիություն» պատճառը, «ֆինանսական ծառայությունների շուկայի հետ ԿԲ-ի և Կառավարության դերի հաշվեկշռում» սկզբունքը՝ «պայմանագրերի վատ կատարում», «պրոդուկտի հատկանիշներ» «գնային խոչընդոտներ», «խտրականություն» ինքնամեկուսացման պատճառները:

«Հասանելիության աջակցության ինստիտուցիոնալ ենթակառուցվածք» և «ֆինանսական ծառայությունների մատակարարների խելամիտ կարգավորում» քաղաքականության ուղղությունների և ատենախոսական հետազոտության նպատակի շրջանակներում հեղինակն առևտրային բանկի մասնաճյուղային ցանցի զարգացումը դիտարկել է որպես ֆինանսական ծառայությունների հասանելիության ընդլայնման միջոց և առաջարկել մասնաճյուղերի ցանցի զարգացման հայեցակարգային մոտեցումներ, մասնավորապես՝ նոր մասնաճյուղերի ստեղծման և տեղաբաշխման առնչությամբ:

Առևտրային բանկի մասնաճյուղերի արդյունավետ տեղաբաշխման համար պահանջվում է մոդելավորել սպառողների վարքագիծը, որոշել սպասարկման (առևտրի) տարածքը, բացահայտել տարածքի բնութագրերն ու առանձնահատկությունները²⁵:

Սպառողների վարքագծի մոդելավորումն իրականացվում է նրանց պահանջ-մունքների բավարարման նպատակով, որպեսզի հարմար լինի մասնաճյուղի կողմից տրամադրվող ծառայությունից օգտվելը, այսինքն՝ խոսքը վերաբերում է մարքեթինգում կիրառվող օգտակարության 4 տեսակներից (ձևի, ժամանակի, վայրի, տիրապետման) մեկին՝ վայրի օգտակարություն ստեղծելուն²⁶, ինչը ենթադրում է հաճախորդներին հարմար վայրում ֆինանսական ծառայությունների մատակարարում կամ հասանելիություն:

Սպառողական ընտրության վրա հեռավորության ազդեցության տեսանկյունից՝ դիտարկվել է մասնաճյուղի սպասարկման (առևտրի) տարածքի հասկացությունը: Վերջինս սահմանվել է որպես հատուկ աշխարհագրական տարածք է, որտեղ ապրում է բանկի մասնաճյուղի կողմից սպասարկվող բնակչության մեծ մասը: Հիմք ընդունելով համընդհանուր ճանաչված մոտեցումները²⁷ առևտրային բանկի մասնաճյուղի սպասարկման տարածքը, ըստ չափի, ատենախոսը ստորաբաժանել է հետևյալ կերպ. ա) սպասարկման հիմնական տարածք, որտեղ կենտրոնացած է հաճախորդների 50%-ից ավելին, բ) սպասարկման երկրորդա-


²⁵ Heather V. Opportunity Index Development for Bank Branch Networks. Graduate Department of Mechanical and Industrial Engineering. University of Toronto. Canada. 2000, p. 148.

²⁶ Бун Л., Куртц Д., Современный маркетинг: учеб. для студентов вузов, обучающихся по специальностям экономики и упр./Луис Бун, Дэвид Куртц; пер. с англ. [В. Н. Егорова]. 11-е изд., перераб. и доп. - М.: ЮНИТИ-ДАНА, 2012, с. 7.

²⁷ St' u Vance Heather. Opportunity Index Development for Bank Branch Networks. Graduate Department of Mechanical and Industrial Engineering. University of Toronto. Canada. 2000, էջ 148: Berman B., Evans J., Retail Management: A Strategic Approach, 11/E Prentice Hall, 2010, էջ 328:

յին տարածք՝ հաճախորդների մինչև 15-25% կենտրոնացմամբ, գ) սպասարկման տարածքի սահման՝ մնացած հաճախորդների ընդգրկմամբ: Առևտրային բանկի մասնաճյուղի սպասարկման տարածքի գնահատման համար հեղինակն առաջարկում է օգտագործել մանրածախ առևտրի խանութների տեղաբաշխման համար մշակված մոտեցումները, մասնավորապես՝ համաբանության մեթոդը, որը հիմնված է բանկի առնվազն մեկ նմանատիպ մասնաճյուղի, սպառողների կողմից գնումներ կատարելու օրինաչափությունների, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և մրցակցային միջավայրի օգտագործման վրա:

Առևտրային բանկի նոր մասնաճյուղի տեղակայման վերաբերյալ որոշման ընդունումն անմիջականորեն կապված է ենթաշուկայի ընտրության հետ: Հիմք ընդունելով առևտրային բանկի մասնաճյուղի մի շարք սահմանումներ՝ առենախոսն առաջարկել է ենթաշուկայի հետևյալ սահմանումը. ենթաշուկան հստակ նույնականացված աշխարհագրական փոքր տարածք է՝ մանրածախ առևտրի և առևտրային այլ կազմակերպությունների, մշտական բնակչության որոշակի կենտրոնացմամբ, որտեղ գործում է առևտրային բանկի մասնաճյուղը կամ նախատեսվում է տեղակայել նոր մասնաճյուղ: Ըստ առենախոսի՝ ենթաշուկայի հասանելիությունը հակադարձ համեմատական է հարակից բնակչության խտությանը: Հիմնվելով մի շարք հետազոտությունների²⁸ և սեփական դիտարկումների վրա՝ առենախոսն առաջարկել է ՀՀ-ում առևտրային բանկերի մասնաճյուղերի ենթաշուկաների դասակարգում. խիտ կառուցապատված քաղաքային վայրի ենթաշուկաներ՝ 1,5-2.5 կմ շառավղով տարածք, արվարձանային ենթաշուկա՝ 3-5 կմ, գյուղական վայրերի ենթաշուկա՝ մինչև 9 կմ (գծապատկեր 6):



Նշանակումներ. Ա՝ առևտրային բանկի գոյություն ունեցող մասնաճյուղի գտնվելու վայրը, Բ՝ առևտրային բանկի նոր մասնաճյուղի ենթադրվող վայրը:

Ծանոթություն. պարզության համար գծապատկերում ներկայացվել են ենթաշուկայի առավելագույն սահմանները:


Գծապատկեր 6. Առևտրային բանկի գործող մասնաճյուղի և ենթադրվող մասնաճյուղերի սպասարկման տարածքները

Գծապատկեր 6-ում ներկայացված երեք ենթաշուկաներում, ըստ առենախոսի, կարող են ստեղծվել հետևյալ իրավիճակները. ա) թերհագեցած սպասարկման տարածք. բնակչության պահանջմունքները բավարարող փոքրաթիվ մասնաճյուղեր, բ) հագեցած սպասարկման տարածք. հաճախորդների պահանջմունքները բավարարելու համար մասնաճյուղերի համապատասխան քանակ, գ)

²⁸ Branch Network Optimization: The Clean Slate Approach. (www.bancography.com/downloads/NetworkOptimization.pdf)

գերհագեցած սպասարկման տարածք. մեծաթիվ մասնաճյուղեր, որոնցից շատերը չեն կարողանում ապահովել բավարար շահույթ՝ գոյատևելու համար: Ակնհայտ է, որ այդ երեք իրավիճակներում մասնաճյուղերի գործունեության արդյունքները և շահութաբերության մակարդակները խիստ կտարբերվեն:

Ատենախոսը նշում է, որ ֆինանսական ծառայությունների հասանելիության ընդլայնումը պահանջում է լրացուցիչ ջանքեր՝ կապված լրացուցիչ ֆինանսական ներդրումների և կառավարման խնդիրների լուծման հետ, ինչից ելնելով՝ ձևակերպել է երկմիասնական խնդիր. ֆինանսական ծառայությունների հասանելիության և մասնաճյուղերի գործունեության արդյունավետության ապահովում՝ առաջարկելով մասնաճյուղերի գործունեության արդյունավետության գնահատման տարբերակված մոտեցում՝ դրանում գլխամասային գրասենյակի ներդրման սահմանազատմամբ, որի դեպքում հաշվի է առնվում նաև ֆինանսական հասանելիության գործոնը: Այդ նկատառումով՝ առաջարկվել է մասնաճյուղի գործունեության կարգավորման տնտեսական կառուցակարգի հայեցակարգային շրջանակ (գծապատկեր 7):



Գծապատկեր 7. *Մասնաճյուղի գործունեության կարգավորման տնտեսական կառուցակարգի հայեցակարգային շրջանակը*

Առևտրային բանկի մասնաճյուղերի գործունեության տնտեսական կառուցակարգի ելակետը ներգրավման ծավալներին համապատասխան վարկերի տրամադրման հնարավորությունն է: Հեղինակն առաջարկել է ներմուծել հետևյալ ներքին տնտեսական նորմատիվները. 1) մասնաճյուղի կողմից ավանդների ներգրավման նվազագույն չափի նորմատիվ (**Ն_ա**), 2) մասնաճյուղի վարկային ներդրումների սահմանային հարաբերակցության նորմատիվ (**Ն_վ**), շահութաբերության նորմատիվ (**Ն_շ**): Հեղինակն առաջարկել է նաև ներքին տնտեսական նորմատիվները տարբերակել չափահաս բնակչության խտության գործակցով:

Հեղինակը եզրահանգում է, որ առևտրային բանկի մասնաճյուղային ցանցի զարգացման ռազմավարության մեջ առաջարկված մոտեցումների կիրառումը հնարավորություն կընձեռի համադրելու ֆինանսական ծառայությունների հասանելիությունը և տնտեսական արդյունավետությունը, իսկ ցանցի գործունեության ընդհանուր արդյունքները կապահովեն ոչ միայն եկամտաբերություն, այլև կնպաստեն կորպորատիվ սոցիալական պատասխանատվության խնդիրների լուծմանը:

Եզրակացություններ մասում ամփոփված են հետևյալ հիմնական եզրակացությունները և առաջարկությունները.

1. Վերջին տասը տարիներին ՀՀ ֆինանսական համակարգը նշանակալի առաջընթաց է ունեցել և նպաստել ֆինանսական ծառայությունների հասանելիության որոշակի ընդլայնմանը: Այդ մասին է փաստում այնպիսի ցուցանիշների բարելավումը, ինչպիսին են առևտրային բանկերի մասնաճյուղերի և բանկոմատների քանակը, ավանդներին և վարկերին վերաբերող ցուցանիշները: Չնայած դրան, ՀՀ-ում ֆինանսական ծառայությունների հասանելիության մակարդակը, ըստ առևտրային բանկերի մասնաճյուղերի քանակի (1000 կմ² հաշվով, 2013 թ.՝ 16.56, 100 հազ. չափահաս բնակչի հաշվով, 2013 թ.՝ 21,4), դեռևս ցածր է: Ավելին, ըստ ավանդներին և վարկերին առնչվող ցուցանիշների նշանակալի են ֆինանսական ծառայությունների հասանելիության անհամամասնությունները մարզերում:
2. Բանկային նոր տեխնոլոգիաների ներդրման ինտենսիվացումը, բանկային ծառայությունների թվի աճը, մրցակցության ուժեղացումը անհրաժեշտ են դարձնում առևտրային բանկերի ֆիզիկական ներկայությունը տարածաշրջաններում, դրանց մասնաճյուղային ցանցերի զարգացումը:
3. Առևտրային բանկերի մասնաճյուղային ցանցերի զարգացումն առնչվում է երկմիասնական խնդրի լուծմանը. մի կողմից՝ տնտեսական արդյունավետության, իսկ մյուս կողմից բանկային ծառայությունների հասանելիության պահովմանը:
4. Ֆինանսական ներառումը հիմնարար է տնտեսական աճի, աղքատության հաղթահարման, ՓՄՁ-ների աջակցության և աշխատատեղերի ստեղծման համար:

Վերոնշյալ եզրակացությունները հիմք են ստեղծում հետևյալ առաջարկությունների համար.

1. Ուսումնասիրությամբ բացահայտված հիմնախնդիրների հաղթահարմամբ հնարավոր կլինի ՀՀ-ում ֆինանսական ծառայությունների հասանելիության մակարդակը կարճաժամկետում մոտեցնել զարգացած տնտեսությամբ երկրներում առկա մակարդակին: Այդ առումով, կարևորվում է առևտրային բանկերի մասնաճյուղային ցանցի զարգացումը, տարածական զարգացման համապատասխան ռազմավարությունների մշակումն ու իրագործումը:
2. Առևտրային բանկի մասնաճյուղերի արդյունավետ տեղաբաշխման համար առաջարկվում է մոդելավորել սպառողների վարքագիծը, որոշել սպասարկման տարածքը:

3. Առևտրային բանկի մասնաճյուղի սպասարկման տարածքը, ըստ չափի, առաջարկվում է ստորաբաժանել հետևյալ կերպ. սպասարկման հիմնական տարածք, որտեղ կենտրոնացած է հաճախորդների 50%-ից ավելին, սպասարկման երկրորդային տարածք՝ հաճախորդների մինչև 15-25% կենտրոնացմամբ, սպասարկման տարածքի սահման՝ մնացած հաճախորդների ընդգրկմամբ:
4. Առևտրային բանկի նոր մասնաճյուղի ստեղծման և տեղակայման վայրի վերաբերյալ որոշում ընդունելիս պետք է կատարել հետևյալ քայլերը. սպասարկման այլընտրանքային այն տարածքի (վայրի) վերլուծություն, որտեղ գործունեություն են իրականացնում առևտրային բանկերի մասնաճյուղերը, այլընտրանքային սպասարկման տարածքի գնահատում մշտական բնակչության և գոյություն ունեցող մասնաճյուղերի տեսանկյունից, տարածքի ընտրություն:
5. Նոր մասնաճյուղի տեղակայման առնչությամբ որոշում կայացնելիս՝ նախատեսվող տարածքի գնահատման համար առաջարկվում է կիրառել համաբանության մեթոդը՝ հիմնված բանկի առնվազն մեկ նմանատիպ մասնաճյուղի, սպառողների կողմից գնումներ կատարելու օրինաչափությունների, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և մրցակցային միջավայրի բնութագրերի վրա:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրատարակվել են հետևյալ գիտական աշխատանքներում.

1. Սարգսյան Հ. Ա., Բանկի հաճախորդների սպասարկման արդյունավետության բարձրացման հնարավոր ուղիները՝ հատվածավորման համապատասխան մոդելների կիրառմամբ: «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության նորաստեղծական զարգացման հիմնախնդիրները», միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան-Դոնի Ռոստով, «Տնտեսագետ», 2011, էջ 468-474:
2. Սարգսյան Հ. Ա., Լոկալ շուկայում բանկի մասնաճյուղի մրցակցային առավելության ամրապնդման հայեցակարգային մոտեցումները: «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», N 9 (135), սեպտեմբեր 2011, էջ 63-65:
3. Սարգսյան Հ. Ա., Բանկային համակարգում համաշխարհային ֆինանսական ճգնաժամի առաջացման պատճառները: «Ազգային տնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրները» գիտաժողովի նյութեր, Եր., «Տնտեսագետ», 2012 , էջ 333-338:
4. Սարգսյան Հ. Ա., ՀՀ առևտրային բանկերի մասնաճյուղերի տնտեսական կառավարման կատարելագործման ուղիները: «Բանբեր ՀՊՏՀ», N2, 2013, էջ 106-111:
5. Սարգսյան Հ. Ա., ՀՀ առևտրային բանկերի ծառայությունների հասանելիության գնահատումն ըստ դրանց մասնաճյուղերի գործունեությանն առնչվող հիմնական ցուցանիշների: «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», N 5 (167), մայիս 2014, էջ 28-32:
6. Սարգսյան Հ. Ա., Առևտրային բանկի մասնաճյուղերի գործունեության ինքնակարգավորման կատարելագործման հայեցակարգային մոտեցումները: „Տնտեսական զարգացման քաղաքականության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում“ ՀՊՏՀ 23-րդ գիտաժողովի նյութեր (Երևան, 2013, հոկտեմբերի 22-25), Եր., «Տնտեսագետ», 2014, էջ 495-502:
7. Սարգսյան Հ. Ա., Առևտրային բանկերի մասնաճյուղերի կառավարման ներքին տնտեսական նորմատիվների համալիրը: «Տնտեսական զարգացման քաղաքականության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում», ՀՊՏՀ 23-րդ գիտաժողովի նյութեր (Երևան, 2013, հոկտեմբերի 22-25), Եր., «Տնտեսագետ», 2014, էջ 488-495:
8. Սարգսյան Հ. Ա., Առևտրային բանկի մասնաճյուղային ցանցի զարգացման մոտեցումները ֆինանսական ծառայությունների հասանելիության համատեքստում: «Բանբեր ՀՊՏՀ», N3, 2014, էջ 113-122:

**ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ФИЛИАЛОВ КОММЕРЧЕСКИХ БАНКОВ И
ДОСТУПНОСТИ ФИНАНСОВЫХ УСЛУГ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата
экономических наук по специальности 08.00.03 –
“Финансы, бухгалтерский учет”

Защита состоится 11-го декабря 2014 г. в 15³⁰ на заседании
специализированного совета 014 по экономике, действующего
в Армянском государственном экономическом университете.
Адрес: 0025, Ереван, ул. Налбандяна 128

РЕЗЮМЕ

Доступность и использование финансовых услуг имеют существенное значение для обеспечения экономического роста и преодоления бедности, что обуславливает необходимость исследования соответствующих показателей, выявления проблем в этой области и разработки предложений по их решению.

Целью диссертационной работы является исследование проблем доступности финансовых услуг в Республике Армения через призму развития филиальной сети коммерческих банков и разработка предложений по решению двуединой задачи – финансовой доступности и эффективного функционирования филиалов коммерческого банка.

Научная новизна диссертации состоит в комплексном исследовании теоретических, методологических и практических аспектов доступности финансовых услуг через филиалы коммерческих банков. Основу исследования составляют разработанные диссертантом концептуальные предложения по созданию и размещению филиалов коммерческого банка и принципов политики расширения финансовой доступности и преодоления финансовой изоляции и самоизоляции в РА.

Основные результаты и научная новизна заключаются в следующем:

- проведена оценка доступности услуг коммерческих банков Республики Армения по основным показателям филиалов, с помощью корреляционно-регрессионного анализа выявлена взаимозависимость показателей финансовой доступности и ВВП на душу населения,

- разработано предложение по совершенствованию методики оценки доступности финансовых услуг с учетом плотности взрослого населения на км² и применением корректирующих коэффициентов по марзам РА,
- предложены концептуальные подходы политики расширения доступности финансовых услуг с учетом таких компонентов, как институциональная инфраструктура обеспечения доступности финансовых услуг, регулирование политики использования общественных ресурсов, финансовых услуг и деятельности филиалов коммерческих банков,
- разработана концепция развития филиальной сети коммерческого банка, основанная на классификации территории обслуживания и обслуживающей способности филиала, а также предложен экономический механизм регулирования деятельности филиала коммерческого банка с комплексом внутренних экономических нормативов (минимальный размер привлечения вкладов, предельное соотношение кредитных вложений и рентабельность).

Диссертационная работа содержит обобщающие выводы, полученные в ходе проведенных исследований и предложения относительно решения ряда методологических проблем по созданию и размещению новых филиалов коммерческих банков и оценке предоставляемых ими финансовых услуг.

Благодаря решению проблем, выявленных в диссертационном исследовании, возможно в ближайшей перспективе доведение уровня доступности финансовых услуг в Республике Армения до уровня стран с развитой экономикой.

THE PROBLEMS OF DEVELOPMENT OF COMMERCIAL BANKS' BRANCHES AND FINANCIAL SERVICES ACCESS IN THE REPUBLIC OF ARMENIA

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the speciality 08.00.03- "Finance, Accounting".

The defense of the thesis will take place on December 11, 2014 at 15:30 o'clock at 014 Specialized Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics. Address: 128, M.Nalbandyan Street, Yerevan, 0025, RA.

ABSTRACT

Access and use of financial services are essential for economic growth and poverty reduction which necessitates the study of relevant indicators to identify problems in this area and to develop proposals to address them. The main goal of the dissertation work is to study the problems of financial services access in the Republic of Armenia through the prism of commercial banks branch network and development of proposals to address the twin goals - access and efficient functioning of commercial banks branches.

Scientific novelty of the dissertation is a comprehensive study of theoretical, methodological and practical aspects of financial services access through commercial banks branches. The basis of the study are the conceptual proposals for the creation and placement of commercial banks branches and principles of expanding financial access policy and overcoming financial exclusion and isolation in RA.


Amongst the results and the findings of the research, scientific novelty is considered the followings:

- to evaluate commercial banks services access in the Republic of Armenia on the basic parameters of the branches, to reveal the interdependence of financial indicators of accessibility and GDP per capita with the use of regression analysis,
- to develop proposals for improving the methodology for evaluating financial services access taking into consideration the density of the adult population per km² and use of adjustment ratios by marzes of RA,

- to propose policy framework approaches to expand the financial services access based on components such as the institutional infrastructure to ensure the availability of financial services, regulation policy on the use of public resources, financial services and commercial banks activity,
- to propose development concept for commercial banks' branches, based on the territorial classification and serving capacity of branches, as well as economic mechanism of branch activity regulation with a complex of internal economic norms (minimum size of attracting deposits, limiting ratio of credit investments and profitability).

Dissertation work contains general conclusions obtained through the research and proposals for solving a number of issues of new branches placement and assessing the efficiency of financial services.

Due to the solution of problems identified in the thesis its possible to bring the level of financial services access in the Republic of Armenia to the level of developed countri.

A handwritten signature in black ink, appearing to be 'A. H. Hovhannisyan', written in a cursive style.